

ՀԱՍՏԻ

Rédaction du Journal Arménien

"ARCHALOUYCE"

Hotel d'Arménie S. Bulbulian

(Egypte) LE CAIRE

ԱՐՁԱՅԻՆ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԾԱԲԱԹԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

—\*—

ՆԳԻՊՑՈՍ

Տարեկան 40 Եգ. ոպ

Վեցամսեայ 20

ԱՐՏԱՍՏԱՆ

Տարեկան 12 Եր

Ապագիկ բաժանարդարութիւն չի՝ ընդունուիր .

Ծանուցումները մասնաւոր պայմաններով կ'ընդունուին .

Ձեռագիրները եւ չեն տրուիր .

ԹԻՒՆ 2

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍՆԱՆ

Արժուէայ եղիպսական կառավարութեան

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՊԵՏ Ս. ՊՈՒՂՊՈՒԼՅԱՆ

ԹԻՒՆ 2

ԵԳԻՊՏ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Մեր սիրեցեալ Վեհապետը, Օգոստոսի 10-ին Ապպաս Փաշա Հիւմի Բ., որուն Գահակալութեան 22 րդ տարեդարձը անպատմելի շքեղութեամբ մը տօնուեցաւ ներկայ Յուն վար ամսոյ 8 ին, Հինգշաբթի օրը՝ 9/22 Յունվար, ժամը 10 ին՝ բացումը կատարելով մարմնաւորեց ու հողի և շունչ տուաւ Եգիպտական Խորհրդարանին .

Օրէնսդրական ժողով . (L'Assemblée Législative.) ա՛յս է եղիպտական նոր Խորհրդարանին տիտղոսը որուն վերաբացումը վերապահուած էր մեր Օգոստոսի և սիրեցեալ Վեհապետին, Ապպաս Փաշա Հիւմի Բ. ի, երեսունէ աւելի տարուան խորունկ՝ բայց քիչ շատ խռովեայ քունէ մը յետոյ . . .

Ն. Բ. Խտիլը՝ անձամբ Նախագահելով Խորհրդարանին՝ գեղեցիկահիւս Գահաճառով մը խրախուսեց և քաջալերեց Խորհրդարանի նորընտիր անդամները, որոնք սեղական ժողովուրդին քունէներով ընտրուած, անոր ձայնը օրինական ուղեգրիծերով լսելի ընելու համար կուգային բազմիչ Խորհրդարանին փառայեղ, բայց միշտ փշոտ՝ աթոռներուն վրայ . Եւ արգարե ի՞նչ կայ աւելի դժուարին ու անբերելի, քան ժողովրդային անհասկացողութիւնները՝ ու ա. նոնցմէ գոյուծին առած հոսանքները իրար բերելով՝ ամբողջութիւն մը խմորելու գործը . . .

Նորին Բարձրութիւնը այդ յոյսերը Գործնականապէս արգարացուց ու պակեց, 22 տարիներ ամբողջ արժանաւորապէս և իմաստութեամբ կառավարելով Եգիպտոսը, իր 18 տարեկան՝ տակաւին պատանի՝ հասակին մէջ գահ բարձրանալով, 1892 Յունվար 8 ին .

Եթէ ի նկատի ունենանք Նորին Բարձրութեան Գահակալութեան շքեղանին Եգիպտացիներուն մէջ տիրող հոգեխռով մտայնութիւնը, մեր շրթունքին վրայ ուրիշ բառ մը չը պիտի գայ արտասանելի այս կարգի հանդիսաւոր պարագաներու մէջ, բայց եթէ՝

Vive le Khedive .

Ե թ.



Ն. Բ. ԽՏԻՎ ԱՊՊԱՍ ՓԱՅԱ ԻԼՄԻ Բ.

S. A. ABBASY HILMY II. L'AUGUSTE SOUVERAIN D'EGYPTE

Avec les meilleurs vœux de ce journal pour la prospérité et bien-être de l'Egypte éminemment hospitalière, à l'occasion du 22me anniversaire de Son avènement au Trône ainsi que de l'heureuse inauguration du Nouveau Parlement Egyptien.

ՆՈՐԱՎԵՊ

Մ Ե Ր Ժ Ո Ւ Ս Ծ Ը

(Շար. նախորդ. թիւէն և վերջ)

Գրիգոր ազան անոր երեսը նայեցաւ այնպիսի թթուած նայուածքով մը, որ քիչ մնաց Միհրան շնթահար պիտի ըլլար, եւ պատասխանին մէջէն սա բաները յսցին քիչ մի անդին նստած քանի մը հոգիներ. «Խելքիդ կկեր է» .

Երկու քոյրերը կը շնանային նոյն անկողինն մէջ. աղքատիկ զրկուած տղու յոգնած քունով, ճոխ մազերնին ամփոփած, ծանր շնչառութիւն մը ուռնցնելով ծոցերնին .

Աստղիկ այլ բազուկը քրոջը ուսին վրայ նետած էր. կ'երեւայ թէ, իրենց վերջին անձկութեան մէջ անոր վրայ նշմարած ծանրահոգ մտատենչութիւն, ներք փարատելու համար, վերջին զընուարթ բառով մը հալածած էր զան, եւ այսպէս քուններնին տարած էր .

Նրկար թարթիչները, ցայտականութեղի մը լոյսին տողեւ, կ'երկարաձգուէին քիչ զժգոյն դէմքերնուն վրայ . Միհան մտնեցաւ անոնց անկողինն մատնեբուն վրայ քարկով .

Նայեցաւ անգամ մը աղջիկներուն վրայ, եւ դուրս ելաւ, կուրծքը պայթելու մօտ .

Խեղճ հայրը հաստատուն կեպով որոշում տուած էր վերջ տալու իր կեանքին . Ա՛լ հերիք տառապած էր . Լիզիկները մինակ թողելուն համար սիրտէն արիւն կերթար . բայց երբ յիշած էր ձմեռուան ձիւնը որ ոտքերուն ոսկրներուն մինչեւ ծուծը թափանցած էր, զաւակներուն անօթի անցուցած գիշերները, առաւօտները որ անուշի մահուան մը պատրաստութիւնն էին, մարդերը որ իրեն թշնամի կերեւային այլ եւս, ահեքն ալ, անյողթելի սարսափ մը եկած էր վրան .

Իր գրացիին մերժումէն վերջը, բան մը վար ինկած էր մաքին մէջ, զըսպանակի մը պէս որ կը կոտրի . Ուրեմն այն մարդը, որ իրեն բարկամութիւն ցոյց կուտար, իրեն նետը կ'զբօսնուէր միայն, եւ այս ամէնը ժամանակ անցունելու համար էր. եւ եթէ ինքը մեռնէր ալ իրեններովը, հոգը չպիտի՝ ընէր . Բարկամութիւն, սէր, ուրեմն միայն բանն էր ասոնք . Եւ ինքը որ այդ խարդախ, այդ անխիղճ մարդուն երես պաշտութիւնը բրած էր, կարծելով որ օր մը աղջիկներուն օգտակար կըլլայ ասով, Այս զաղափարը սիրտը կը ճմլէր . Կարծեցեալ բարեկամին ժանտ դէմքը այն պահուն ուր անոր աջակցութիւնը

խնդրեց իր վհին եղբորքին վրայ, կապարէ մղձաւանջի մը նման կը խեղդէր իր էութիւնը:

Կը զեղեւէր, իբրև գնդակով մը սրտէն զարնուած և նայուածքի, լեզուի վէրքեր կան որ չեն բուժուիր: Որոշած էր:

Գիւղին մէջ եւ մտակայ գիւղերը այցելութիւններ տուած էր մարդերու եւ իրերու:

Գնաց այն տեղերը, որոնք մանկութիւնը կը յիշեցնէին իրեն. գոյրոցը, եկեղեցին, ատենօք բնակուած տուն մը: Անոնց մէջ ապրած էր ժամանակ մը, երբ սիրելիները դեռ հոս էին:

Տեսաւ, բարձունքին վրայ, պարտէզի մը մէջ հովանոց մը որ կը բարձրանար — երջանակաւէ վրայ, ուր մօրը կենդանութեանը հօրը հետ, ամուսնոյն ողջ եղած ատենը՝ ամուսնոյն եւ մատաղ զաւակներուն հետ զանրօք բարի եւ երջանիկ հօր ու բարեկեցութիւնը վայելած էր, հոն վերը, կապոյտին մօտ, բարձրէն գիտելով Վոստրի ակնահմայ կապոյտին վրայէն սահող մեծ ու պզտիկ շոգեհաւերուն, նաւակներուն երկուեկը եւ հետուն, դիմացը, երկնային բոսորավառ սհազին ժայռերու կամ նարնջազոյն լիճերու մէջ ծանր ծանր վար սուզող հրեզն հսկայ աչքը:

Յետոյ ամուսնոյն ընտանիքին տանը առջեւէն անցաւ, հիմայ կէս փլած, իր մտքին պէս: Այդ կիսաւեր շէնքը գերեզման կը բուրբէր: Անցաւ անոր առջեւէն, ինչպէս որ քանի քանի անգամ անցած էր երբեմն եւ դարձեալ անցած՝ պատուանին վարդոյրներուն սպիտակութեան մէջ փայլող խարտեալ գլուխ մը տեսնելու համար:

Տասներկու տարեկան եղած ժամանակ, որ մը, անմեղ անառակ տղու զբօսանք մը ըրած էր, ծովեզերքը տեղ տեղ նաւակներու կայարանի մուտքերուն վրայ դրուած կամրջակներուն վրայէն, խաղալու համար, վազած էր՝ մօրմէն եւ իրեններէն զատուելով, մայրը զող ելած էր: Իրիկունը տունը խրատ, շատ խիստ կշտամբանք լսեր էր, այնչափ որ արիւնը գլուխը ցատքեր եւ հիւանդացիներ էր: Այդ կամրջակներուն վրայէն անցաւ, եւ տեսաւ որ տախտակները նոյնն էին, շատ մաշած:

Ու հիմայ, դարձեալ հոն կ'երթար: Շատ կանխազարթոյց աքաղաղի մը հետաւոր նուազ ձայնը ակնաջին հասաւ: Էջ մը, շատ հեռուէն, զոնչը բարձրացուց, հազիւ լսելի, որ խիստ մարեցաւ:

Երկինքը նայեցաւ. պաղ էր: Իր ճակատը խարոյկի նման կ'այրէր: Վերջին անգամ մըն ալ նայեցաւ ծովեզերքէն դէպի ցամաք: Գիւղը կը քնանար: Դարատափէ դարատափ տեղ տեղ մինչեւ վերը բարձրացած ընկուածքները. ծառերու ու բուսականակերպ ստուերներով շրջապատուած, վաղնջուց աշխարհի մը հնուութիւնէ սեւցած տուները երեցան իրեն որոնց մէջ երկար երկար գործերէ Վեր մարդ չէր մնացած, ու դատարկ էին: Մարդկութիւնը կը խուսափէր իրմէ:

Չաւակներուն քնացած կողմը նայեցաւ, սիրտը բան մը չըսաւ իրեն: Կեանքին վախը խելքը զլսէն ատեր էր: Իր յուսահատութիւնը, հսկայ պատի մը պէս բարձրացեր էր հիմայ իրեն եւ աշխարհի միջիւ, զոր չէր տեսներ ալ եւ զոր կը գուշակէր միտին:

Մշուշի մէջ էր: Աւելի զոգացողներուն մօտ կը քան կենդանի աշխարհին: Քայլ մը միտին:

Երկինքը նայեցաւ. կարծեց թէ հազարաւոր աչքեր իրեն վրայ սեւեռուած էին ու զինքը կը կանչէին. Չեղբ սրբութիւն տարաւ. դեռ ողջ էր: Երկինքին հայրենաբարձութիւնը ունեցաւ:

Առաւօտ էր: Մովեզերքէն քար մը առաւ ծանր: Չուան մը առած էր հետը, խեղճ կտոր

լաթ չորցունելու չուանի մը, որմէ կը կախուէին յաճախ իր զաւակներուն ձորձերը. քարը ոտքին կապեց: Երկու քայլ պիտի ընէր:

Վախցաւ. մոռցած էր ծանրութիւնը ծովեզերքին շատ մօտ տանելու. . . չէր կրնար տեղափոխուիլ, չուանը կարճ էր: Ճակատագիր թէ զուգահեռութիւն . . .

Վայրկեան մը, սարսուռի պէս բան մը ունեցաւ: Դողաց: Չուանը քակելով տունը երթալու գաղափարը կայծակի աբազութեամբ անցաւ ուղեղին մէջէն. աչքերը փակեց, շտեմնելու համար:

Գրեզոր աղային վերջին կծու նայուածքը մտքին առջեւ բերաւ: Մկճ էր մը ընելով՝ ծոցեցաւ, քարը վերցնելով, անդունդի մը եզերքէն քալող քնայրջիկի մը անդիտակցութեամբ քանի մը քայլ ըրաւ, եւ ինկաւ ծովուն մէջ:

Նաւակներու կայաններէն մէկուն մէջ կանուխ արթնցած ձկնորս մը ձողբուր լսեր էր. դուրս ելած էր տեսնելու համար: Մովեզերքէն նայեր եւ այգուն միջնաղ նշուղին ցողացումով, մահուան դէմ մաքառող մարդու մը ճիգերը նըշմարած էր:

Գրեզոր հանեցին:

Երկու օր վերջը, առաւօտուն, Գրեզոր աղային մէկ երեսասարդ դրացին. նաւամատոյցի սրճարանին առջեւէն անցած ատենը, տեսաւ որ չուանի վաճառականը, նարկիլէի փողին սաթը բերանը, մէկուն հետ ետանդով նարս կը խազար, պոտալով կանչելով՝ մինչդեռ ուրիշներ կը խնդային:

Գահիրէ Ծ. Սեթեւն (\*)

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Չ Ե Կ Ո Յ Ց



«Արշալոյս»-ի վերաբերեալ ամէն նիւթական գործողութիւններ պիտի կատարուին փոխան ստացականներու, որոնք անպայման պէտք է ստորագրուած ըլլան Վարչութեան Գրաստանի Մեծ. Տիար Սարգիս Պիլպիւլեանի կողմէ, և խմբագրութեան կնիքը պէտք է կրեն:

Հակառակ պարագային՝ ո՛ր և է ստացական անվաւեր կը նկատուի:

(\*) Մ. Խ. Բագրատիոն ուսուցիչ էր Արքայի քանստեղծ Յ. Սեթեւն եպիսկոպոստին Քառասնամեայ գրական գործունէութեան Յարեանի շէնքի տեղափոխուած անցեալ 1913 ին Բրեկսթիս Թատրոնի մէջ. վերը հրատարակուած նորակայր «Արշալոյս»-ին հետեւ յաջապիս գրած չէ. այլ՝ 1912 ին՝ երբ իր գրուածներէն «Արշալոյս»-ը (Արշալոյս հրատարակութիւնը կատարեց, պատիւ ըրած էր անկի օրինակ մը «Արշալոյս»-ի Տեղեւ Տ. Եղիշե Թորոսեանի նուիրել. որուն ի պատասխան շնորհակալարեան, Արշալոյսի Տեղեւնը ընտրովի հաստատ մը շարեւ ջուած էր. սենտ պարտականութիւնը այժմեականութիւն ունեցած ըլլալուն հետեւ. . . Պեճը չէ՛ մեծ վիշտով խոստովանիլ թէ՛ վերջ հրատարակեալ վիպիկն արագուրը անպատեղի դիմաւորութեանց քաղցրեցան անցեալ տարի եւ հազիւ ուրեմն կարելի եղաւ այս տարի աւարտել գայն, այնպէս որ՝ պարտաւորուած եմ հիմայ ներողաւորութիւնը հայցել անոր մեծանուն հեղինակին, իր հրատարակեցը մեր կողմէ ակամայ այսչափ չար չարուած ըլլալուն համար. . .

ԼՈՒՍՆԱՆԻՆ ՀԵՏ



Լուսինն է. արտի գիշեր Երազներու վերադարձը Փառաքաւ սասցերն ալ կը մտնի Հոգիներուն պէս այնոյս. եւ մրոտիւսն ստուերներ՝ Մեղմիկ կ'իջնեն արտի մէջ. եւ գիշերին շուռ հեւայիկ Հոգի կ'ըլլայ անձնասուր, Լուսնակին հետ ժպտիլ կողմ Զի գերեզման մ'եւ սխար:

Աշխատեմք մեղմիկ զովանք եւ խոնկերէն անուշ բոյր՝ Ու շուսնակէն ալ կը մտնաւ եւ համարյալներ սիրարքոյ՝ Ա՛հ գիշերին ստուերները Մեղմիկ կ'իջնեն արտի մէջ:

Գիշերներու շուռ դիւրանքի Հոգի յաւեհ անձնասուր Լուսնակին հետ ժպտիլ կողմ Զի շիրմասան մ'եւ ալ սխար:

Գահիրէ Ծ. Չ. ԹԵՂԵՐԵԱՆ

ՏԻՂԱԿԱՆ



ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ Հինգ շաբթի առաւօտ ժամը 10 ին Եգիպտական Օրէնսդրական Ժողովին բացումը տեղի ունեցաւ Ն. Բ. Խորհրդին նախագահութեամբ և բացման գահաճառովը, որուն թարգմանութիւնը պիտի տանք յաջորդ թուով:

Սիթատիկ Բերդէն գոռացող թնթանօթի որստները խզցին այն աւելի քան երեսնամեայ լուսնութիւնը, որ Հանգուցեալ Խորհրդի Թէվֆիք Փաշային օրերէն իսկ տիրած էր Եգիպտոսի կառավարական շրջանակին վրայ, Օրէնսդրական Ժողովին կախակայեալ մնալով:

Մէկ կողմանէ Եգիպտացի Ժողովուրդին քիչ մը բուռն կերպով յայտնած փափաքներէն, և միւս կողմանէ Ն. Բ. Խորհրդին, և Անգլիոյ ներկայացուցիչ Մարաշախթ Լորտ Բիշնէրի, և Վսեմ. Նախարարապետ Մուհամմէտ Փաշա Սայիտի Ժողովրդասիրական զգացումներէն բղխեցաւ Նոր Խորհրդարանը, Խորհրդարանի նախագահը, Վսեմ. Մազլում Փաշա, և յաջորդաբար Նորընտիր Խորհրդականները հետեւեալ երդումը ըրին Գահաճառէն անմիջապէս յետոյ:

«Յանուն ամենակարողին Աստուծոյ կ'երգնում թէ՛ անկեղծութեամբ պիտի կատարեմ իմ պաշտօնս հանգէպ Ն. Բ. Խորհրդին, և հաւատարմութեամբ ու հնազանդութեամբ պիտի վերաբերուիմ երկրին օրէնքներուն հետ»:

Ն. Բ. Խորհրդը առջի օրը Ապտի. նի պալատին մէջ ընդունելով Օրէնսդրութեան նախագահը և անդամները, հետեւեալ յայտարարութիւնները ըրած է:

«Երկար տարիներէ ի վեր կը սպասէի այս երկրանիկ օրուան Գահն

երկու տարիներէ ի վեր իմ մտածմանս առարկան եղած էր այս երկրին գործերը ներկայանալի ուժեղացումը օժտուած գործակիցներով վարելու համար. այս պատճառաւ՝ փառք կուտամ Աստուծոյ՝ որ այդ օժանդակութիւնը պիտի գտնեմ նորապաշտ Օրէնսդրական Ժողովէն, որուն շանքերը իմիջներուս միացած երկրորդ աւելի յառաջդիմութեան ճամբուն մէջ պիտի գնեն»:

«Հանգարտ ուրախութեամբ մը պիտի գրեմ Զեր շանքերը, որոնց մով պիտի օժանդակէք իմ հառափարութեանս և պիտի ծառայէք երկրին, անոր նիւթական և մտաւորական մակարդակը բարձրացնելու համար»:

«Կար և կարողութիւն կը հայցեմ Բարձրեալէն ձեր բոլոր շանքերը պսակելու, որպէս զի երկրին բարօրութեան համար պատրաստուած ծրագրերը իրագործուին»:

ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿ

Ա սօր կէս օրէն յետոյ ժամը չորսին Շամիրամիս օթէլին մէջ թէյի սեղան մը պիտի տրուի ի պատիւ կարմիր Մահիկի երկու թուրք պատուիրակներուն, որ այս պահուս հաս կը գտնուին և Ն. Բ. Խորհրդին ընդունելութիւնը վայելած են:

Քաղաքիս շատ մը երեւելիներու հրաւիրագրերը լրկուած են:

ՇԷՐԻՖ ՓԱՇԱՅԻ ՄԱՀՄՈՐԱԸ



Մեր պաշտօնակիցը՝ Էմիր, Զօրավար Շէրիֆ Փաշայի մահափորձին նկատմամբ հետեւեալ ծանօթութիւնները կուտայ:

«Այնքան զրկուած մեզի կը ծառայանեն թէ՛ կրտսէ, Գեկտեմբեր ամսոյ վերջերը, մահափորձին մէջ ստեպ յիշատակուած Ալի պէյ անուն անձը՝ Այնքան զրկուած կը գրտնուէր ինը գաղտնի գործակալներու ընկերակցութեամբ»:

«Այս սեւ ձեռքերու խումբը, կը յաւելու մեր պաշտօնակիցը. պաշտօն ունէր հսկելու Սատրգ պէյի և ազատական կուսակցութեան շէքերուն վրայ. և ասոնց հսկողութիւնը յանձնելով՝ Միտիլին և Յառաջդիմութիւն» դժմութիւն պատկանող հայ լրտեսի մը, ինք Փարիզ կանցել, Շէրիֆ փաշայի մահափորձը գործադրելու համար»:

«Բայց անողք բազմը այնպէս անօրինեց՝ որ ինչպէս դիտենք՝ Ալիի ընկերները Փարիզի մէջ իրենց մեղքերը կը քաւեն տեղոյն ոստիկանութեան զգաստարաններուն մէջ և շատ չանցիր որ ինք ալ անոնց միտնայ, Բայց ինչպէս կըլլայ որ, կրտսէ Էմիրի թղթակիցը, Եգիպտական ստիպանութիւնը մինչեւ ցարդ միջոց մը ձեռք չ'առաւ արտաքսելու համար Եգիպտոսէն այն հայը, որ միւսնոյն աւազակախումբին իրըն գործակից մատնացոյց եղած է»:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ազգ. Երեսփոխան

Տիրա Յարութիւն ճանկիւղեանի  
Ի 4. Պոլիս

Լուսթիւնը ոսկի է ըսած են բայց  
թուլ տուէք որ ես ասոր, հակառակը  
պիղծեմ . . .

Շատ մը ծանօթներէ լսեցի թէ՛  
դո՛ւք, Պ. Երեսփոխան, Ձեզի վստահու-  
ուած - բնականաբար ոչ կրնաք իրենց  
կողմէ - Երեսփոխանի նուիրական պաշ-  
տօնը Ձեր թաքուն հաշիւներուն ի սպաս  
զրած էք: Պօլսոյ Բիւզանդիոն օրաթեր-  
թին մէջ հրատարակելով վիպածե ողի-  
սական մը, որուն պարունակութիւնը՝  
ինչպէս գրած էր Պ. Երեսփոխան, Ձեր  
տեսածներուն ու չի սեսածներուն  
ալ «հաւաքոյթը» կը կոչուէ եղբր:

Դո՛ւք, Պ. Երեսփոխան, ազատ էք  
վէպ մը գրելու՝ բայց իրաւունք չունիք  
անով որ ինչի մը արժանապատուութիւնը  
չհազարծելու, ձեր վէպը արժեքներու  
համար այնպիսիներու քով՝ որոնք ձեր  
ներքին դիտումներուն անձանօթ են  
թերեւս:

Ըսին ինձի որ՝ ձեր ինքնագովու-  
թեան հաւաքածոյին մէջ իմ անունս ալ  
խառնած էք, միմիայն սկզբնաստուեր  
թորածելով եւ ուրիշ անխոստովանելի  
ճամբաներով ալ մատնացոյց ընելով  
ինքնութիւնս որպէս թէ՛ ստորագրեալս  
Տէր Մամբրէ Գան. Վարդանեանէ հինգ  
սովի ստացած ըլլամ բանտարկեալի մը  
զրկելու համար, եւ զանց ըրած ըլլամ  
զրկել:

Գանի որ Տէր Մամբրէ Գան. Վար-  
դանեանը դեռ ողջ է, եւ Գանիբէլի ա-  
ռաջնորդութեան տեղապահութիւնը կը  
վարէ հիմա, կուզամ ձեր «Թերթօն»  
ողիականին որ հայերու բազմէն զիր  
քի ալ վերածուած է եղբր, այդ խոշոր  
ՍՈՒՏԸ ճշտել, հրապարակաւ յայտնելով  
թէ՛ ասկէ չեմ գիտեր քանի տարիներ  
յառաջ - թուականը մոռցած եմ - Տէր  
Մամբրէ Գան. Վարդանեանը ինձի ինք-  
րած է երկու ոսկի Բրէտի Լիօնէին յանձ-  
նել կարծեմ թէ Ձեր հասցէին, եւ ես՝  
ի յարգանս իրեն՝ խնդրանք կատարած՝  
եւ երկու ոսկու դրամատան Ձէք իրեն  
յանձնած եմ որ նամակաւ զրկած է ձեզի  
ու զուք հիմայ կը ժողք հաստատել թէ  
չէք ստացած եղբր այդ գումարը. այդ  
իմ գիտնալու բանս չէ: Բրոյօֆաիօնի  
ալ պէտք չկայ:

Բայց մտիկ ըրէք. Պ. Երեսփոխան,  
Բրէտի Լիօնէին այնպիսի հաստատութիւն  
մէ՛ որ վստահ եմ թէ իր հաստատու-  
թեան օրէնքի վեր կանոնաւոր հաշուակա-  
լութիւն եւ տեսքներ ունի եւ կարող է  
ճշգիւ թէ՛ ինչ գումար ստացած եւ ու-  
մունք վճարած է: Ուրեմն հանցէք ձեր  
կողմէ փոխանորդներ նշանակել այստեղ  
Բրէտի Լիօնէին միջոցաւ ճշգիւլու համար  
թէ՛ այդ երկու ոսկու գումարը որ  
թուականին զրկուած եւ ո՛վ գանձած է:  
Կարծեմ թէ՛ այն ատեն հարկ չ'պիտի  
մնայ ձեր գրածներուն արժէքը որակել  
իմ բանբրովս, որոնք ի հարկին՝ գոր-  
ծածելու դիւրագրգռութիւնը ունիմ,  
իմ չափազանց անկեղծութեանս իբր  
արտայայտութիւն . . .

Ուրեմն Պ. Ազգային Երեսփոխան,  
գէթ Ձեր հրատարակած գրքին արժէքը  
բարձրացնելու համար, կա՛մ պէտք է  
որ ձեր ըսածը հաստատէք եւ կամ պէտք  
է որ հրապարակաւ ընդունիք թէ՛ խո-  
շոր ՍՈՒՏ մը ջրգած էք ի վնաս ուրիշի  
մը արժանապատուութեան . . .

Ի յարգանս Ձեր ազգ. երեսփոխա-  
նութեան է որ իմ լուսթիւնս կը խզեմ,  
այպ թէ՛ ոչ, կարծեմ որ «լուսթիւնը»  
ոսկի ձեռնարկէ . . .

Գանիբէ 24 Յունիս 1914

Ե. Թ.

ԱՊԱՔԻՆՈՒՄ

Նախորդ թիւով ծանուցինք թէ՛  
Գալստեան վարժարանի նախկին  
Տնօրէն Տիրա Մ. Մալեան անկողնոյ  
կը ծառայէ իտալական հիւանդա-  
ցին մէջ: Երէկ ուրախութեամբ  
ստուգեցինք թէ՛ Տիրա Մալեան  
ապաքինելով հիւանդանոցը թողած է:  
ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Մենք ենք Տօնին առթիւ այցե-  
լութիւններ ընդունելու համար մեր  
Առաջնորդարանին մէջ պաշտօնական  
մարմիններու կողմէ հիւրընկալներ  
չի գտնուելուն համար դիտողա-  
թիւններ տեղի կունենան:

Մեր պատ. ժողովականները  
առաջնորդի բացակայութիւնը զգա-  
լի չընելու համար, պէտք էր որ  
կանխահոգ միջոցներ ձեռք առնէին:  
ՇՆՈՐՀԱԿԱԼԻԻ

Պալայեան և Տէր Կարապետեան  
ընտանիքները կուզան հրապարակաւ  
չորհանգալութիւն յայտնելու Հնչակ-  
եան կեդր. Վարչութեան. Դահլիճի  
Հնչակեան Մասնաճիւղին և այն բա-  
լոր Մասնաճիւղերուն, ընկերներուն  
բարեկամներուն և ծանօթներուն,  
որոնք անձամբ և ներկայացուցիչ-  
ներով ներկայ գտնուեցան իրենց  
ողբացեալ ընկերոջ Մարգիտ Պալայեան  
(Գեռի)ի տխուր յուզարկաւորութեան  
ինչպէս նաև անոնց՝ որոնք նամակաւ  
և հեռագրաւ իրենց ցաւակցութիւնն  
յայտնեցին:

ՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այս շաբթու մեր յարգելի բա-  
րեկամը՝ Տիրա Գէորգ Պէրպէրեան՝  
գժեբազորութիւնը ունեցաւ հոյին  
յանձնելու իր վեցամսեայ դուստրը  
Նուարդ, ծանր հիւանդութեան մը  
հետեանքով: Մեր ցաւակցութիւնս  
ները Տէր և Տիկին Գ. Պէրպէրեանի  
և բոլոր պարագաներուն:

ՄԱՆԱՆԱՅ

Աստուածաշունչով նուիրագոր-  
ծուած այս աստուածատու բերքէն,  
չատ քիչ քանակութեամբ քաղաքս  
հասած է ճամբորդի մը միջոցաւ:  
Փութացէ՛ք օգտուել: Անկէ ունե-  
նալու համար պէտք է դիմել Տիրա  
Միսա Շիրինեանին ի Շարա Մու-  
համէտ Ալի:

ՆԱՄԱԿ ԱՏՈՒՓ

4. ՊՈԼԻՍ Ե. — Ստորգ է որ ասկէ  
յառաջ Պօլսէն քաղաքս եկած էր Ար-  
չալոյս անունով դերասանուհի մը, ա-  
ռանց մականունի, որուն հետ պէտք  
չունեցանք ծանօթանալու:

Թուրք քատրախուրի մը հետ է  
եղեր ըսուեցաւ, որոնց ներկայացուցի-  
րուն ալ անձանօթ մեղքինք: Ինչպէս  
կերելի. Պօլսէն շիսակ մեջ ուղի որած  
ըլլալու չեն ստոնք, բայց մեզի հետ  
անչուութիւն չունի իրենց ներկայու-  
թիւնը, բացի անունի շիփութենէ մը՝  
որ տեղի ունեցաւ երկիցս նամակատան  
մէջ:

ԹԱՆԹԱՅ. — Անցեալ տարի Հայ-  
կական Մամլոյ Ընկերութեան անունով  
հրապարակ ելած վիճակահանութեան  
տոմսերը, մեծագոյն մասամբ սպառած  
չեն, վիճակահանութեան հսկելու պաշ-  
տօն ունեցող առժամայ վարչութեան  
կազմալուծման պատճառաւ: Վիճակա-

նութեան դրուած 1000 օրինակ գիրքերը  
ապահով ձեռքբերու մէջ կը գտնուին,  
իսկ հաշուակալական մասը խիստ կանո-  
նաւոր է: Մենք պատրաստ ենք ո՛րեւէ  
բարեփոխական հաստատութեան փոխան-  
ցիլ տոմսերը՝ կարեւոր չափ մը իրենց  
թողով: Եթէ այդ փափաքը յայտնուի  
գտնուին, Հակառակ պարագային պէտք  
պիտի ըլլայ նոր միջոց մը մտածել տոմ-  
սերը սպառելու, որպէսզի տեղի ունենայ  
վիճակահանութիւնը: Ուրեմն պէտք է  
քիչ մը եւս սպասել:

ԳԱՀԻՐԷ Դ. Ս. — Ձեր դիտողու-  
թիւնները արգարացի են: Մեր ազգա-  
կիցներէն շատերը սկսած են ախորժի  
այն բաներէն, որոնք օրէնքի եւ կեն-  
ցաղազնութեան կանոններուն շատ խո-  
տոր կը համեմատին: Առնցքով ոմանք  
այդ օրինազանցութիւններուն մէջ կու-  
զեն գտնել համբաւ եւ քաջագործու-  
թիւն . . . Մենք ալ համամիտ չենք  
կրնար ըլլար այդ գործելակերպերուն:  
ՃԻՊՈՒԹԻ Տ. Ո. — Կը խնդրուի որ  
ասկէ յառաջ ձեզի զրկուած նամակներուն  
նպաստաւոր պատասխան մը տալու բա-  
րեհաճութիւնը ունենաք:

ԳԵՆՈՐԳ ԻՐԷՔԵԱՆ

ՄԵՄ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՍԻՎԱՌԻ  
—  
Հաստատուած 1889ին եզրպսոս  
Աղիփաւ լրիոյ եւ Դահլիճի մէջ կը վա-  
ճառէ Ամենաբնօր Սիկառներ

ՀԵՌԱԳԻՐ

4. Պոլիս 21 Յունիս. — Շե-  
րիժ փաշայի մահախորձին հերոսը,  
Ազմի, Փարիզէն վերադառնալով  
Թաշեաք պէյին հետ ճեւակցած է:

Մ Խ. — Այս հեռագիրը տեսակ մը  
անըստուգութիւն կը պարունակէ իր  
մէջ, Անունի չհազարծում մը կարելի է  
ենթադրել:

Լոնսոն 21 Յունիս. — Ռուս  
կառավարութիւնը Բ. Իրան վերջ-  
նական պատասխանը ուզած է Հա-  
յաստանի Բարեկերպութեան խնդրոյն  
նկատմամբ:

4. Պոլիս 21 Յունիս. — Նու-  
րի պէյ սուաքիւն զօրաբանակի  
հրահանաւոր անուանուեցաւ:

Լոնսոն 22 Յունիս. — Յրան-  
ական կառավարութիւնը բորփա-  
յեն պահանջած է Փարիզի մէջ Շե-  
րիժ փաշայի մահախորձին հերո-  
սակ աւերասանուած Ազմի պէյը  
Թուրք կառավարութիւնը սակարկե-  
լի պատասխանած:

Լոնսոն 22 Յունիս. — Պատե-  
րազմական նախկին նախարար  
Իզզեթ փաշա իր ծրագիրները պար-  
զած է «Թայմզի» քրոնիկին. ա-  
ւելցնելով թէ՛ ինք նախարարութե-  
ան հրաժարած էր Ալպանիոյ գահուն  
համար եւ կը յուսայ թէ՛ տեղա-  
փոխութիւններ չ'պիտի հակառակին իր  
այդ ծրագրին, որեւէ Վիսթրիան  
ըլլալուն համար:

Պէրլին 22 Յունիս. — Իշխան  
Վիս ամսոյս 28 ին Բոցսալէն գեր-  
ման պատերազմաւարով մը Թրիքսը  
կը մեկնի, Տիրացոց տրապան հա-  
մար:

Հոռն 22 Յունիս. — Վոյոնա-  
յեն ստացուած հետազիր մը կ'ըստ  
թէ՛ Իսլամի Գեւալ Ալպանիոյ առ-  
ժամայ կառավարութեան հրաժա-  
րական տուած է, իր իրաւասութիւն-  
ները հսկիչ յանձնախումբին թողով:

— Պէրլին Աղայի եւ իր 27 մեղ-  
նակիցներուն դատարարները դր-  
ոնիակ սեղի պիտի ունենայ: Բան-  
տարկեալները փախցնելու ամեն  
միջոց վիժեցնելու համար կան-  
խանոց միջոցներ ձեռք առնուած են:

Սօժիս 22 Յունիս. — Սերպիոյ  
հետ դիւանագիտական յարաբերու-  
թիւնները վերսկսած են:

Փարիզ 22 Յունիս. — Պ. Աւ-  
րէն 15000 Էրանցի մրցանակ մը  
հաստատու է Փարիզէն Հէլիօփոլիս  
ճամբորդութիւն մը կազմակերպելու  
համար:

Պէրլին 22 Յունիս. — Յու-  
նաստանի հաշոյն շինուած վեց  
թորիսօներ Գիէվէն Պիէօն մեկ-  
նեցան:

4. Պոլիս 23 Յունիս. — Յու-  
նաստանի նոր հիւպատոս Պ. Բանաս  
իր վարարարութիւնը ներկայացուց:

Վաշոն 23 Յունիս. — Քեմալ  
պէյ մեծ պետութեանց կողմէ Աշա-  
նակուած Յանձնախումբին թողով  
իր իրաւասութիւնները կառավարու-  
թեան ղեկը ստանձնեց:

Լոնսոն 23 Յունիս. — 4. Պոլ-  
սոյ պատերազմական պաշտօնասան  
մէջ, կը հարստէ «Թանի քրոնիկ-  
ցը» դատարարութիւն մը երեսուն քեր-  
ուած է: Ոստիկանութիւնը մեկ ֆանի  
աւերասանակներու ֆենտրիքը կը  
կատարէ եւ ամեն միջոց ձեռք առ-  
նուած է Էմվեր փաշայի կեանքը  
պաշտպանելու համար:

Լոնսոն 24 Յունիս. — 4. Պոլ-  
սոյ Հայոց Պատրիարքարանին եւ  
Իրքիսիսի բանակցութիւնները ճա-  
խողչուն հետեւեալով՝ Հայոց սզ-  
գային Վարչութիւնը որոշած է որ  
հայերը ձեռնարկեն մեծ Միտրաս-  
կան ընտրութեանց մէջ:

Լոնսոն 24 Յունիս. — Մեծ  
եպարքոս տեղաբնակց ղեկավարե-  
րուն յայտարարէ թէ՛ Բ. Իրան  
պիտի մերժէ ընդունիլ եզրական  
կողմերուն նկատմամբ Պատրիանց  
տուած որոշումը եւ պիտի բանայ ես  
տանէ, Գիտն ու Միտրիլին:

— Թուրքիա Միտրիլի Ասիա-  
կան ցամաքին վրայ 100,000 է  
աւելի զօր կըրոնացուցած է եւ  
Յոյն ջրանակներուն մէջ համազու  
գոյացած է թէ՛ այս համախմբու-  
մին նպասակը կըրիներուն վրայ  
յարձակիլ է:

Լոնսոն 24 Յունիս. — Շերիժ  
փաշա փարիզեան քերթերուն մէջ  
յուսակարգ կը հրատարակէ Պոլսէն  
եկած նս ալի մը, որ իր մահա-  
խորձին համար ձեռք առնուած  
միջոցներուն մատրասանութիւնները  
կը պարտանակէ:

ԻՍԿԱՅՈՒԹԻՒՆ

Աղէքսանդրիոյ և Գաւառներու  
համար գործակալներու պէտքը  
կայ. փափաքողները կրնան դիմել  
«Արշալոյս» ի խմբագրութեան հաս-  
նելին:

# T I R I N G

## Թ Ի Ր Ի Ն Ք


ՊՈՎԱՔԻ ՓՈՂՈՅ ՆԱԻԿԻՆ ՓԱՍՔԱԼ

Վ Ա Ջ Ա Ռ Ա Տ Ա Ն Կ Ի Ց

ԵՂԱՆԱԿԻՆ ՅԼՐՄԱՐԱՍԵՆ ՏԵՍԱԿ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍԱԾ ԵՆ ՓՈՒՔԱՅԷՔ ՕԳՏՈՒՐԸ

Կ. Պոլսոյ ամենամանօթ թիփին Կ Տ ա ն Գ ա Ն Ի ր Է Ի ն ր ա հաստատ Մասնաճիւղն է .

### ՅԼԷՕՐԻՍՔ ԻՒՆԻՎԵՐՍԷԼ



Մեծ վաճառատուն արուեստական ծաղիկներու, ծաղիկկողովներու եւ փուռնիներու .

Մուսի Շարա եւ Միզդիյն Լասիւնց Եկեղեցոյն փողոցը

ՏԻԿԻՆ ԼՈՒՍԻ Պ. 201ԱՔՅ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հայ հասարակութեան թէ՛ իր ծաղիկներու վաճառատունները փոխադրելով Շարա-էլ-Միզդիյն (Մուսքի) Լասիւնց Եկեղեցոյն փողոցը . եւ անմրցելի աժան գիներով կը վաճառէ արուեստական ծաղիկներ, ամենաչքիղ կողովներ, հարսանեկան գեղաշէն ծաղիկներ, կանանց գլխարկներու յատուկ փնջակներ եւ յուղարկաւորութեանց ծաղիկապակներ .

Թարմ ու բնական ծաղիկներն չեն կը պատրաստուին սոյն վաճառատան մէջ . Մի՛ գիմէք օտարազգիներու, որովհետեւ Fleuriste Universelle վաճառատունը միակն է որ այդ ամեն մեծ ու պղտիկ վաճառորդներուն կը հայթայթէ արուեստական ամեն տեսակի եւ գոյնի ծաղիկները .

Ասիկայ ամենաստույգ իրողութիւն մը ըլլալով, գիւրդն է հաշուել որ այս վերջինները բուն գինէն աւելի շահով մըն է որ պիտի վաճառեն իրենց գիմողներուն, մինչդեռ ուղղակի Fleuriste Universelle վաճառատունը գիմելով տարակոյս չկայ թէ՛ անոնց շահածն ալ ձեր քսակը պիտի մնայ .

## ՏՊԱՐԱՆ

### Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս



ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանը՝ Արժանեաց Եգիպտական Կառավարութեան ներքին Գործոց նախարարութեանէն . ամենամեծ խնամով կը տպագրէ .

1. — Արժանեաց Օրաքերքեր, Հանդիսներ, Պրոշիւրներ, Պարբերականներ եւ մանաւանդ Գիրքեր .
2. — Վաճառականական տետրեր՝ եւ գրասենեակի ամեն տեսակ տպագրական պիտոյքներ՝ ամեն չեղովով .
3. — Յայտարարութիւններ, շրջաբերականներ, Ամսական խմբագրութիւններ, եւ այլն .
4. — Հարսանեկան տուետեր, մանազգիներ եւ այլ տպագրութիւններ .

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանին հասցեն է, ցճոր սեօրիւնութիւն . Շարա Մուհամմէտ Ալի . Սիրասէլ երկարող քրտակէյի գծիկ վրայ, Հարս-էլ Մասապէկ-էլ Գուսիլէ, թիւ 40, Տիար Միհաս Երիւնեանի յարկաբաժնին մէջ .

THE 'SINGER' MANUFACTURING Co

## ՍԻՆԿԵՐԸ ԵՐԿԻՐՈՒԹԻՒՆ

Շարա-էլ-Միզդիյն Տպարանի Պրայնի սեփականութեանը մէջ .


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐԸ են եւ ասոնցով մինչեւ ցարդ 22.000,000 ծախուած է .

400 է աւելի վկայական եւ մեքենաներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախնդիսին մէջ ստացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՅ  
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՐԻՆ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Ք. ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր 'եքենայի վրայ ՍԻՆԿԵՐԸ ներկայաբանելով .

Գին 2ԱՔ .

ԱՇԽԱՐՀԻ ՊՈՂՈՐ ԲԱՆԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՒՂՆԵՐ ՈՒՆԻ

Ձրի դասեր եւ նորոգութիւններ, յաճախորդաց տուններուն մէջ .

Վճարմանց գիւրութիւն

Փոխանակութիւն հիներու . յւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԵՐՈՎԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԱՔԵՐԷՆ ԼԵՉՈՒԻ

Ազգային վարժարանի Արտքերէն ուսուցիչ Տ. ՕՀան Ս. Խնտամեանի ղիւրուսոյց եւ նորագոյն մեթոտով պատրաստած սոյն դասագիրքը, շերտապէս կը յանձնարարենք ամէն անոնց որոնք Արարչեզուն կարճ ժամանակի մը մէջ հիմնական կերպով սորվիլ կը փափաքին .

Գինն է 4 ՖՐԱՆԲ .

Փափաքողը կրնան դիմել հեղինակին անձամբ կամ նամակով . Սոյն դասագիրքը կը ծախուի նաեւ գրավաճառ Տ. Սուրէն Չաքմաքճեանի խանութը Ապտին փողոց, իսէյ սինէմային կիցը, եւ լրագրական Տ. Հունկի խանութը՝ Օրբութի հրատարակիչ .

## Ի, Ա, ԵՐԱՆ

Հրատարակութիւններ

ԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԻՐԲԵՐ ԱՄԷՆԻՔՆ ԱԼ

- Բառարան հայերեկե-անգլերեկե սան . 50
- Բառարան անգլերեկե-հայերեկե » 75
- Հայ անգլ. եւ անգլ. հայ միասին սայ . 1 -
- Պատ. գրուցարարիւն հայ. անգլ. » 150
- Գործնական առողջաբանութիւն » 150
- Սեռային առողջաբանութիւն » 125
- Գործն. եւ սեռ. առողջ. միասին » 2 -
- Ժողովրդային երգարան » 2 -
- Երգարան եւ սեռ. առողջ. միասին » 3 -
- Երգ. եւ գործն. առողջ. միասին » 3 -

Հասցե՝ E. A. YERAN

P. O. BOX 84, Sta. A.

Cambridge, Mass.

## ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՁԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Փոխադրուած է Շարա Ապտ էլ Ալիզ Ապտինի Գարագոյին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գոսթիւն մը չեն անաւելու համար զանազան տեղեր դիմած ու զժգոն մնացած են, թող անշամ մը մեր վաճառատունը այցելեն . պատրաստ եմ իրենց հետ պայմանաւորուելու որ՝ եթէ իրենց յանձնարարութիւնը զոհանցուցիչ չ'գտնեն, կանխավճարով ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հազուելու փափաքողներուն համար, նըպաստաւոր առիթ մը պիտի ըլլայ .

Ապտինի ապագրանքները նկատողութեան չեն տնուեր, եւ անոնք որ ինծի կը դիմեն, ղիւրաւ կրնան ըմբռնել ապտինի տարբերութիւնները . թէ զործի մտքութեան եւ թէ գիտնելու մասին .

1-50 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

## ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ. ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ (Եգիպտոս)

Շարաթական կանոնաւոր երթեւեկ . Միացեալ Նահանգներու, Քա. նաաայի եւ Հարաւային Ամերիկայի համար .

Գաղթականներու համար չափաւոր գին .

Աչրի քննութիւնը ձրիաբար կը կատարուի տեղույս մէջ, Մանրաւսան տեղեկութեանց համար դիմել Գործակալութեան .

ՄՕԶԻՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Հեռագրական Հասցե՝ ԼԵՆՕՔՕ

Փոսթ արկղ թիւ 897

Թուրքիոյ գաւառներու մէջ

փոխ-գործակալներ կը փնտռուին

Արժանեաց՝ ԵՂԻՇԷ. ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրոյ